

Միշաք²⁵⁰ սուլտան, ըստ Ժամանակագրին՝ էր ամիրայ Տարսունի, այսինքն կուսակալ՝ իձեռանէ սուլտանին Եգիպտոսի. եւ գառաջինն (յամի 1368) եկն՝ իվերայ Սոյ բիրու զօրաց, այլ դաւանօք իբրեւ զքօսանաց աղագաւ ասէր՝ «Գամ առաջի քաղաքին՝ իֆռուճ, վասն տեսանելոյ զքաղաքն», վասն որոյ եւ թողեալ զբանակն՝ իվերայ գետոյն Մախթայ (531), առեալ էր զընտիր ընտիր զօրականին, յորս 400 հեծեալք զրահաւորք, եւ 800 ումբաւորք. այլ քաղաքացեացն՝ ի վերայ հասեալ խաբէութեանն՝ խրախուսեցին այր զընկեր եւ խրախուսեցան՝ ի թագաւորէն յանուն Քրիստոսի եւ Ս. Լուսաւորչին. մինչեւ «մի ոմն յիշխանաց թագաւորին, որ էր իւր յոյժ սիրելի եւ մտերիմ եւ խոհեմ, որ էր աւագ չաւուշ (486), Պարոն Կոստանդին Բագիքարկցի»²⁵¹, որ ի Բագում աւուրց հիւանդ կայր անկողնով, դժուարին ցաւօք, եւ դեռ չէր էր լաւացեալ՝ իշկարօտութենէն?, վասն այս պատահմանն՝ զետ առողջ քաջասիրտ մարդ, եւ վասն բարի թագաւորին սրտին համար՝ զմահն՝ իյանձն էառ, եւ հեծեալ ընդ թագաւորին, եւ սպանաւ՝ ինոյն տեղին. եւ էր պատճառն՝ իւր հիւանդութիւնն, զի վատոյժ եղեւ, որ չկարաց ինքն զինքն ժողովել՝ իվերայ ձիոյն: Եւ մի ոմն այլ սիրական թագաւորին՝ որ էր իւր զօրացն չաւուշ, Սիր Թորոս Մսցի անուն», նոյնպէս անկեալ երեւի՝ իմարտին. զոր Քաջութեամբ մղեալ՝ յաղթութեամբ եւ Բագում աւարաւ դարձան Հայք. եւ յայնմ մարտի մեծապէս առաքինացաւ Լիպարիտ, սպանեալ եւ զՄանչակին գոված տղայն, զոր եւ թաղեցին՝ իվերոյիշեալ բլրին (541): Բայց յերկրորդում ամին՝ ոչ նոյնպէս խոհեմացան Հայք, յորժամ վերադարձաւ որդեկորոյս ամիրայն՝ իվրեժ, զօրաժողով լեալ 60,000 արանց. եւ յետ նահատակութեան Լիպարտին՝ դարձեալ երկիցս եկեալ, ի11 դեկտեմբեր (1370) «այրեաց զՍիւ, եւ նստաւ երեք օր. եւ ինոյն ամին եղեւ սղութիւն յերկրին Կիլիկեցոց՝ վասն այսքան պատերազմաց. որ ոչ կարացին հողագործքն սերմանել եւ հնձել զերիս ամս. եւ եղեւ մի մոթ ցորեան՝ որ ունի զծանրութիւն իբրեւ յիսնոց լորոց, զոր հունտքերի կոչեն, 500 դուրուշի»:- Յետ յիշատակի

²⁵⁰ Ուր կամ տասն ամօք յառաջ քան զայս դէպս՝ ծանօթ է Մէնճէք Մէլիէտտին, երբեմն կուսակալ Հալպայ եւ երբեմն Դամասկոսի, եւ յետոյ (1374) հազարապետ եւ իբր փոխարքայ յԵգիպտոս. այլ թէ նոյն իցէ սա եւ ամիրայն Տարսունի, ոչ ունիմ ասել: Ոչ շատ ամօք յառաջ քան զնա՝ կայր եւ Մէնճէք-էլ-Եուսուֆի, մի յաւագ պաշտօնէից սուլտանին Եգիպտոսի:– Վայլ, Դ:

²⁵¹ Իցէ՞ արդեօք թարգմանեալն ի մենջ Բագեբերդ, յէջ 157,

~~854~~ Բարիքարկ (